Արձանագրություն թիվ 1
(Նիստը տեղի է ունեցել 2026 թ. սեպտեմբերի 4-ին:)

Նիստին մասնակցում էին կառավարման խորհրդի 11 անդամները։Նիստին մասնակցում էին « Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիաննա Նավասարդյանը , "Երևանի Ա.Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց" ՊՈԱԿ-ի հաշվապահ Ռ. Ամիրյանը, "Երևանի հ.2 ավագ դպրոց" ՊՈԱԿ-ի հաշվապահ Հ. Բաբուրյանը։

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվության քննարկում։

2.2026–2027 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին տեղեկատվություն։

3.Դպրոցի զարգացման ծրագրի տարեկան գործողությունների կատարման և առաջիկա անելիքների մասին։

4.Դպրոցի նոր ուսումնական տարվան նյութատեխնիկական պատրաստվածության և անվտանգ պայմանների ապահովման մասին։

5.Ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի փոփոխություն։

6.էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետի լրավճար սահմանելու մասին։

7.Կառավարման խորհրդի աշխատանքային պլանի և նիստերի ժամանակացույցի հաստատում։

8.ֆինանսատնտեսական գործունեություն և բյուջեի կատարում։

9. 2026-2027 ուստարվա դպրոցների աշխատանքային Ներքին կարգապահական կանոնները։

10. 2026-2027 ուստարվա վարձաչափային (տարիֆիկացիոն) և հաստիքային ցուցակների ներկայացում։

11. Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվում փոփոխություն

Լսեցին -1. 2025–2026 ուստարվա ներքին գնահատման հաշվետվության քննարկում

Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիաննա Նավասարդյանը և մյուս դպրոցների ներկայացուցիչները

ներկայացրին 2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվությունը։ Անդրադարձ կատարվեց դպրոցի գործունեության հիմնական ուղղություններին, կրթության որակի ապահովմանը, սովորողների ուսումնառության արդյունքներին, կրթական միջավայրին, կառավարման արդյունավետությանը, ինչպես նաև նախորդ տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումներին և բարելավման ենթակա խնդիրներին։ Ներկայացվեցին ուսումնական հաստատության գործունեության ցուցանիշները, կրթության որակի դինամիկան, ինչպես նաև առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղիները։

(2025–2026 ուստարվա ներքին գնահատման հաշվետվությունները կցվում են)։

Որոշեցին

1.Հավանություն տալ 2025–2026 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվություններին։

2. « Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի գնահատման հաշվետվությունն ընդունել ի գիտություն։ Արձանագրված խնդիրներն ու առաջարկությունները հաշվի առնել 2026–2027 ուսումնական տարվա աշխատանքների պլանավորման և դպրոցի գործունեության հետագա բարելավման ընթացքում։

Լսեցին - 2. 2026–2027 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

Դպրոցների ներկայացուցիչները

ներկայացրին նոր ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ուղղությունները։ Նշվեց, որ ուսումնական գործընթացը կազմակերպվել է հաստատված ուսումնական պլանին, դասաբաշխմանը և դասացուցակին համապատասխան։ Ներկայացվեցին նաև կրթության որակի բարձրացման, սովորողների առաջադիմության, հաճախումների վերահսկման և դաստիարակչական աշխատանքների հիմնական առաջնահերթությունները։

Որոշեցին
Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։ Ապահովել 2026–2027 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ կազմակերպումը և սահմանված աշխատանքների հետևողական իրականացումը։

3. Դպրոցի զարգացման ծրագրի տարեկան գործողությունների կատարում և առաջիկա անելիքներ
Լսեցին՝ Տնօրենների զեկուցումները Դպրոցի զարգացման ծրագրի (ԶԾ) տարեկան գործողությունների պլանի կատարողականի և առաջիկա անելիքների վերաբերյալ։

Որոշեցին՝ Հավանություն տալ Դպրոցի զարգացման ծրագրի տարեկան գործողությունների կատարողականներին։

Լսեցին - 4. Նյութատեխնիկական պատրաստվածություն և անվտանգ պայմանների ապահովում։

Լսեցին դպրոցի՝ 2026–2027 ուսումնական տարվան նյութատեխնիկական պատրաստվածության վերաբերյալ տեղեկատվությունը։ Ներկայացվեցին ուսումնական տարածքների, գույքի և սարքավորումների վիճակը, իրականացված նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և ընդհանուր անվտանգության պայմանների ապահովման ուղղությամբ կատարված միջոցառումները։
Որոշեցին
Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։ Շարունակել վերահսկողությունը դպրոցի նյութատեխնիկական պայմանների, սանիտարահիգիենիկ պահանջների և անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ՝ սովորողների և աշխատակիցների համար անվտանգ կրթական միջավայր ապահովելու նպատակով։
Լսեցին - 5. Ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի փոփոխություն
Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիաննա Նավասարդյանը ներկայացրեց ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը։ Ներկայացվեցին այն հիմնական

փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել թափուր տեղերի համար մրցույթների հայտարարման և անցկացման ընթացքում։

Որոշեցին

Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։ Ուսուցչի թափուր տեղի մրցույթների կազմակերպման և անցկացման ժամանակ առաջնորդվել գործող կարգով և դրանում կատարված փոփոխություններով։

Լսեցին - 6. Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի առաջարկությունը Էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետնի լրավճար տրամադրելու և Երևանի Ա.Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահի առաջարկությունը 2 աշխատակցի լրավճար տրամադրելու մասին՝ ՏՀՏ ֆիզ.շահագործման, օպերատիվ աջակցության պահպանման համար 40000 դրամ և պարտականությունների խիստ ծանրաբեռնվածության համար 56420 դրամ։

Որոշեցին

Հավանություն տալ ներկայացված առաջարկությանը և էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետին սահմանել լրավճար՝ գործող իրավական կարգավորումների, համապատասխան հիմքերի և դպրոցի ֆինանսական հնարավորությունների շրջանակում։

Լսեցին - 7. Կառավարման խորհրդի աշխատանքային պլանի և ժամանակացույցի հաստատում։

Լսեցին՝ Խորհրդի նախագահի կողմից ներկայացված 2026–2027 ուստարվա Կոլեգիալ կառավարման խորհրդի աշխատանքային պլանը և նիստերի ժամանակացույցը։

Որոշեցին

Հաստատել Կառավարման խորհրդի 2026–2027 ուստարվա աշխատանքային պլանը և նիստերի ժամանակացույցը։

Լսեցին -8. ֆինանսատնտեսական գործունեություն և բյուջեի կատարման մասին։

Ներկայացվեցին դպրոցների ֆինանսատնտեսական գործունեության և բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվությունները։ Ներկայացվեցին ֆինանսական միջոցների օգտագործման հիմնական ուղղությունները, կատարված ծախսերը և դպրոցի բնականոն

գործունեության ապահովման նպատակով իրականացված աշխատանքները։

Որոշեցին

Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։ Շարունակել ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և սահմանված կարգին համապատասխան օգտագործումը՝ առաջնահերթությունը տալով դպրոցի կրթական գործընթացի և անհրաժեշտ պայմանների ապահովմանը։

Լսեցին -9. 2026–2027 ուստարվա Ներքին կարգապահական կանոններ

Ներկայացվեցին դպրոցների աշխատանքային ներքին կարգապահական կանոնների նախագծերը (համալրված նոր հոդվածներով/փոփոխություններով)։

Որոշեցին

Հաստատել դպրոցների 2026–2027 ուստարվա ներքին կարգապահական կանոնները։

10. Լսեցին գլխավոր հաշվապահ Ռուզաննա Ամիրյանին

Նախահաշվում կատարվել է փոփոխություն 2026թ-ի 3-րդ եռամսյակում Կոնֆուցիուսի ծրագրի շրջանակներում դպրոցին տրամադրվել է 3284,7 հազ դրամ չինական մշակույթի և կուլտուրայի ուսումնասիրման համար /համաձայն պայմանագրի/ և 182,6 հազ դրամ ետվերադարձված գումար /ըստ կանոնակարգի/:Ընդամենը եկամուտը-3467,3 հազ դրամ; Ծախսային հոդվածներում ներկայացված են համապատասխան ծախսերը:

Որոշեցին

Հավանություն տալ 2026 թվականի նախահաշվի փոփոխությանը և ԿԳՄՍՆ ներկայացնել հաստատման:

11. Լսեցին՝ Տնօրենների և հաշվապահների ներկայացրած 2026–2027 ուստարվա վարձաչափային (տարիֆիկացիոն) և հաստիքային ցուցակները։

Որոշեցին

Ընդունել ի գիտություն դպրոցների 2026-2027 ուստարվա հաստիքացուցակը և տարիֆիկացիոն ցուցակը:

Խորհրդի նախագահ՝ Ն.Այվազյան

Քարտուղար՝ Շ. Գալստյան